ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

08 հուլիսի 2011 թվականի N 70-Ա

ք. Հրազդան

Ա. ՀՈՎԱՍԱՓՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 164-րդ հոդվածի 1-ին մասով՝

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Մայակովսկու առողջության առաջնային պահպանման կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրեն ***Արմեն Հովասափյանին*** տրամադրել 2011 թվականի իր ամենամյա նվազագույն արձակուրդը՝ 2011 թվականի հուլիսի 18-ից մինչև 2011 թվականի օգոստոսի 12-ը ներառյալ՝ 20 աշխատանքային օր:

Հիմք՝ ***Ա. Հովասափյանի*** անձնական դիմումը:

2. ***Արմեն Հովասափյանի*** արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Մայակովսկու առողջության առաջնային պահպանման կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրենի պարտականությունների կատարումը ժամանակավորապես դնել ընկերության ընտանեկան բուժքույր ***Ծաղիկ Խաչատրյանի*** վրա, իսկ բնակչության բժշկական սպասարկումը՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Արամուսի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության ընտանեկան բժիշկ ***Նունե Խաչատրյանի*** վրա:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Գ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ